Հավելված

# ՈւՂԵՑՈՒՅՑ

## ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴՈՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

# ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

# ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Թոյլատրելի դիտարկիչով բացել https://eauction.armeps.am/ էջը: Մուտքագրել ճշգրիտ մուտքանունը «Օգտանուն» դաշտում:
Մուտքագրել ճշգրիտ գաղտնաբառը «Գաղտնաբառ» դաշտում:
Համակարգ մուտք գործելիս մուտքանուն դաշտն անհրաժեշտ է նշել
փոքրատառերով: Սեղմել «Մուտք» կոճակը:






Բացված պատուհանում երևում են այն դաշտերը, որոնք անհրաժեշտ են աշխատանքի համար՝ ըստ Ձեր արտոնությունների:

Զանգակ նշանի հատվածում ցուցադրված են օգտատիրոջը հասցեագրված բոլոր ծանուցումները:

Միջերեսի լեզուն փոխելու համար անհրաժեշտ է սեղմել համապատասխան լեզվի հատվածը (ARM, ENG, RUS):



«**Իմ տվյալները**» բաժնում օգտատերը ստուգում և խմբագրում է պատվիրատուի տվյալները:



«Բանկային ռեկվիզիտներ» դաշտում նոր հաշվեհամար ավելացնելու համար պետք է սեղմել «Ավելացնել» կոճակը:
Բացված տողում տեղեկատվությունը մուտքագրելուց հետո անհրաժեշտ է սեղմել «Պահել»կոճակը:
Առկա տվյալը խմբագրելու համար անհրաժեշտ է սեղմել «Մատիտ» նշանը: Փոփոխեք տվյալները և սեղմեք «Պահել» կոճակը:
Բոլոր տողերում փոփոխություններ կատարելուց հետո պատվիրատուի տվյալների հաստատման համար անհրաժեշտ է սեղմել «Պահել» կոճակը:



«**Հանձնաժողով**» բաժնում քարտուղարը ստեղծում է գնահատող հանձնաժողով կոնկրետ մրցույթի համար և կառավարում արդեն ստեղծված խմբերը:



Հիմնական ցանկում արտացոլվում են առկա խմբերը: Առկա տվյալները դիտելու համար անհրաժեշտ է սեղմել «Մանրամասներ» կոճակը:




| Հ/հ | Անվանում | Համար | Նախագահ | Քարտուղար | Անդամներ | Ամսաթիվ | Կարգավիճակ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 16 | ՀՀ ՖՆ ընթացակարգի հանձնաժողով | 441-Ա | Պողոս Պողոսյան (համակարգող) | Պողոս Պողոսյան (համակարգող) | Վազգեն Հակոբյան | 2020-06-27 | Ակտիվ | |
| 15 | ՀՀ ՖՆ ընթացակարգի հանձնաժողով | 441-Ա | Պողոս Պողոսյան (համակարգող) | Պողոս Պողոսյան (համակարգող) | Համլետ Սարգսյան,Վազգեն Հակոբյան | 2020-05-11 | Ակտիվ | |
| 14 | ՀՀ ՖՆ ընթացակարգի հանձնաժողով | 441-Ա | Պողոս Պողոսյան (համակարգող) | Պողոս Պողոսյան (համակարգող) | Համլետ Սարգսյան,Վազգեն Հակոբյան | 2020-05-11 | Ակտիվ | |
| 13 | ՀՀ ՖՆ ընթացակարգի հանձնաժողով | 441-Ա | Պողոս Պողոսյան (համակարգող) | Պողոս Պողոսյան (համակարգող) | Վազգեն Հակոբյան,Համլետ Սարգսյան | 2020-05-11 | Ակտիվ | |
| 12 | ՀՀ ՖՆ ընթացակարգի հանձնաժողով | 441-Ա | Պողոս Պողոսյան (համակարգող) | Պողոս Պողոսյան (համակարգող) | Համլետ Սարգսյան,Վազգեն Հակոբյան | 2020-05-11 | Ակտիվ | |
| 11 | ՀՀ ՖՆ ընթացակարգի հանձնաժողով | 441-Ա | Պողոս Պողոսյան (համակարգող) | Պողոս Պողոսյան (համակարգող) | Վազգեն Հակոբյան,Համլետ Սարգսյան | 2020-05-11 | Ակտիվ | |

Հանձնաժողով ստեղծելու համար պետք է սեղմել «Ստեղծել հանձնաժողով» կոճակը մրցույթի մանրամասներ էջից:



Հանձնաժողով ստեղծելու համար անհրաժեշտ է լրացնել նկարում նշված տվյալները:

Անդամներ և Նախագահ դաշտերում, ընտվելիք օգտվողների ցանկից ձեր նախընտրելի օգտվողը բացակայելու է՝

. եթե armeps.am համակարգում որպես օգտվող գրանցված օգտատիրոջ դերը ՊՊԳՊ չէ,

. եթե դերը՝ ՊՊԳՊ է, սակայն օգտատերը աճուրդ համակարգի իր էջ երբեք մուտք չի գործել:

Մուտքագրված տվյալները պահպանելու համար պետք է սեղմել «Պահել» կոճակը:



Առկա հանձնաժողովի տվյալներում փոփոխություն կատարելու համար անհրաժեշտ է սեղմել «Խմբագրել» կոճակը:

Մուտքագրված տվյալները պահպանելու համար պետք է սեղմել «Պահել» կոճակը:




«**Հարցում**» բաժնում տեսանելի են գնման ընթացակարգերի շրջանակներում մասնակիցների կողմից ներկայացված հարցումները:




Առկա տվյալները դիտելու համար անհրաժեշտ է սեղմել «Մանրամասներ» կոճակը:

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1853 | տեստային-վերապատրաստում-ապ-1/2022 | վերապատրաստում | Սա տեստային մրցույթ է՞, | 2022-08-30 12:29:02 | 2022-08-29 15:00:00 | Պատասխանված | > |

| | |
|---|---|
| Հ/հ | 1853 |
| Ծածկագիր | տեստային-վերապատրաստում-ապ-1/2022 |
| Անվանում | վերապատրաստում |
| Հարցում | Սա տեստային մրցույթ է՞, |
| Ժամանակ | 2022-08-30 12:29:02 |
| Վերջնաժամկետ | 2022-08-29 15:00:00 |
| Կարգավիճակ | Պատասխանված |
| Պատասխան | այո . խնդրում ենք չներկայացնել մասնակցության դիմում |

«**Ծանուցում**» բաժնում քարտուղարին տեսանելի են գնման ընթացակարգերի շրջանակներում իրեն հասցեագրված բոլոր

ծանուցումները:




Առկա տվյալները դիտելու համար անհրաժեշտ է սեղմել «Մանրամասներ» կոճակը:






«**Առկա մրցույթ**» բաժնում քարտուղարը կառավարում է իրեն հասցեագրված մրցույթները:




Ընդ որում, «Աճուրդ» համակարգում արտացոլվում են միայն այն CPV կոդերով ստեղծված մրցույթները, որոնք նախատեսված են ՀՀ օրենսդրությամբ՝ որպես էլ. հակադարձ աճուրդով գնման ենթակա առարկաներ: Քարտուղարին հասանելի են միայն այն մրցույթները, որոնք PPCM համակարգում ստեղծվել են տվյալ պատվիրատուի, տվյալ քարտուղարի (գնումների համակարգող) համար:

«Առկա Մրցույթ» բաժնում գնման ընթացակարգերի մասին որոնումներ կատարելու համար անհրաժեշտ է օգտվել ստորև ներկայացված նկարում առկա դաշտերից: Մրցույթի տվյալներին ծանոթանալու համար անհրաժեշտ է սեղմել «Մանրամասներ» կոճակը:



# ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

«Նոր» կարգավիճակ ունեցող մրցույթը կառավարելու համար անհրաժեշտ է մուտք գործել «Մրցույթի մանրամասներ» էջի «Կառավարել» բաժին




* եթե գնման ընթացակարգը կազմակերպվելու է Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, ապա քարտուղարը «Նախահաշվային գին» դաշտում պետք է մուտքագրի զրո ( 0 ) արժեքը.

* եթե գնման ընթացակարգը կազմակերպվելու է Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, ապա քարտուղարը պետք է սահմանի ամեն չափաբաժնի գնման գինը (ընդհանուր քանակի համար)



Մրցույթի կառավարման էջի համապատասխան դաշտերում հրավերի օրինակելի ձևի գեներացման համար անհրաժեշտ է մուտքագրել դինամիկ տեղեկատվությունը:






Մանրամասների էջի միջերեսը (ինտերֆեյսը) կարող է տարբերվել՝ կախված գնման առարկայի տիպից (ապրանք, աշխատանք, ծառայություն) և գնումների պլանում սահմանված նախահաշվային գնից:

Բոլոր այն բաժիններում, որտեղ տեղադրված է ռուսերենի և անգլերենի համար հատկացված դաշտեր՝ այդ դաշտերի լրացումը պարտադիր է

«Բանկային ռեկվիզիտներ» տողի դաշտերում պետք է ընտրել նշված գործարքների համար պատվիրատուի բանկային ռեկվիզիտները:

«Երաշխիքային ժամկետ» դաշտում անհրաժեշտ է մուտքագրել հիմնական միջոց հանդիսացող ապրանքի համար երաշխիքային ժամկետը:

«15.6» հատվածում պետք է նշել մոտավոր գնային սահման հրավերի ճիշտ ձևը ստանալու համար.



«Անգործության առավելագույն ժամանակը (օր)» չի կարող պակաս լինել 10 օրից

«Պայմանագրի կատարումը» պարտադիր ընտրման դաշտ է, որտեղ պետք է ընտրել «Փուլային» կամ «Մեկ անգամյա վճարում» տարբերակներից մեկը:

Ապրանքների գնման համար կազմակերպվող մրցույթների դեպքում քարտուղարը «Գնման ժամանակացույց - Տեխնիկական բնութագրեր» բաժնի «Բնութագիր» դաշտում կարող է լրացնել տեխնիկական բնութագիրը կոնկրետ չափաբաժնի համար, և/կամ ներբեռնի ֆայլային տարբերակով՝ «Ֆայլ» դաշտում: Իսկ «Մատակարարում» դաշտում պետք է մուտքագրել մատակարարման՝ հասցեն, ենթակա քանակները և ժամկետները:

Եթե որևէ չափաբաժնի համար կցվում է տեխնիկական բնութագիրը պարունակող ֆայլ, ապա տվյալ ֆայլը պետք է պարունակի տեխնիկական առաջադրանքի և՛ հայերեն, և՛ ռուսերեն տարբերակները: Տեխնիկական բնութագրի տեքստային դաշտը երկու լեզուներ պարտադիր լրացման դաշտ է:

«Վճարման ժամանակացույց» աղյուսակում լրացվում են նախատեսվող վճարումները ըստ ամիսների՝ տոկոսային թվերով, առանց տոկոս (%) նշանի և աճման կարգով:




Հրավերի տեքստ տեսնելու համար անհրաժեշտ է սեղմել «Նախադիտել» գործիքը, որտեղ կարմիր գույնով ներկայացված են այն դինամիկ դաշտերը, որոնց համար օգտատերը դեռ տեղեկություն չի լրացրել, իսկ դեղին գույնով նրանք, որոնց համար արդեն կա մուտքագրված տվյալ:

Օգտատերը ցանկացած դաշտում տեղեկատվության մուտքագրումից հետո կարող է սեղմել «Նախադիտել» կոճակը:

/ *Հավելված N*

*ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի*

*--------------------------ի N -Ա հրամանի*

*Օրինակելի ձև*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2017-12-18 11:00:00 -ի 1 որոշմամբ

Էլեկտրոնային աճուրդի ծածկագիրը՝ ԴԱՀԿ-ԳՀԱՊՁԲ-17/1/3

Պատվիրատուն՝ ՀՀ ԳՆ, որը գտնվում է (պատվիրատուի հասցեն) հասցեում, հայտարարում է էլեկտրոնային աճուրդ, որն իրականացվում է eauction.armeps.am համակարգի միջոցով:

Ընտրված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել ՀՀ արդարադատության նախարարության ԴԱՀԿ ապահովող ծառայություն մատակարարման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի սույն էլեկտրոնային աճուրդի ընթացակարգին մասնակցելու հավասար իրավունք:

Ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեցող անձանց, ինչպես նաև մասնակիցներին ներկայացվող որակավորման չափանիշներն ու այդ չափանիշների գնահատման համար ներկայացվելիք փաստաթղթերը սահմանված են սույն ընթացակարգի հրավերով:

Ընտրված մասնակիցը որոշվում է հրավերի պահանջներին բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ էլեկտրոնային աճուրդի արդյունքում նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Կատարված փոփոխությունները պահպանելու համար պետք է սեղմել «Պահել» կոճակը: Դուք կարող եք մինչև մրցույթի հրապարակումը խմբագրել մուտքագրված ցանկացած տեղեկատվություն՝ սեղմելով «Կառավարել» կոճակը:




Համակարգողը մինչև վերջնական հրապարակումը ցանկացած պահի կարող է տեսնել կնքվելիք պայմանագրի օրինակելի ձևը և փոփոխություններ կատարել պայմանագրի նախագծում




Սեղմելով «Կնքվելիք պայմանագիր» կոճակի վրա՝ քարտուղարը տեսնում է Պայմանագրի նախագծի օրինակելի ձևը, իսկ բոլոր այն դաշտերը,որոնք խմբագրելի են, նշված են կարմիր գույնով

Խմբագրելու համար պետք է սեղմել մկնիկի ձախ սեղմակը տվյալ դաշտի վրա և խմբագրել այն

*Եթե իրականացվում է որևէ փոփոխություն հայերեն տարբերակում, պետք է իրականացնել համապատասխան փոփոխություն նաև ռուսերեն տարբերակում անհամապատասխանություններից խուսափելու համար

Պայմանագրի նախագծի լեզուն հնարավոր է փոփոխել պատուհանի վերևի աջ անկյունում տեղադրված ARM, RUS կոճակների միջոցով

ARM RUS

# Կնքվելիք պայմանագիր

Փակել Վերականգնել Պահել Բեռնել

3.2 Պայմանագրի կնքումից մինչև ________ ՀՀ դրամը, Գնորդը փոխանցում է Վաճառողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Վաճառողին վճարումներ չեն կատարվում:

730[2]

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

-

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված ___15____ օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

8 31[3]

Փոփոխությունների ավարտից հետո համակարգողը պետք է սեղմի «Պահել» կոճակը փոփոխությունը հաստատելու համար, ինչպես նաև ցանկացած պահի կարող է բեռնել և տեսնել արդեն իսկ փոփոխված տարբերակը «Բեռնել» կոճակի միջոցով:

Եթե համակարգողը ցանկանում է Պայմանագիրը հետ վերադարձնել նախնական տարբերակի, կարող է սեղմել «Վերականգնել» կոճակը:

Գործողությունների ավարտից հետո պետք է փակել պատուհանը «Փակել» կոճակի միջոցով:

Հայտարարությունը հրապարակելու համար անհրաժեշտ է սեղմել «Հրապարակել» կոճակը: Մրցույթի կարգավիճակն ինքնաշխատ եղանակով կդառնա «Հրապարակված», ինչից հետո դրանում կարելի է փոփոխություններ անել կամ չեղարկել միայն օրենքով սահմանված կարգով՝ տվյալ հրապարակված մրցույթի մանրամասների էջում սեղմելով համապատասխան կոճակը:

Հրապարակված մրցույթի մանրամասների էջից կարելի է բեռնել հրավերի ֆայլային տարբերակը՝ սեղմելով համապատասխան կոճակը:

*Եթե մրցույթի նախադիտումը / հրապարակումը  համակարգի կողմից չի կատարվում և որևէ խնդիր մասին համակարգը չի տեղեկացնում, դա նշանակում է, որ մուտքագրվող դաշտերում առկա է **&** նշանը, որը կամ պետք է փոխարինել դրան համապատասխան անվանումով, կամ պետք է տեխնիկական բնութագիրը կցել ֆայլային տարբերակով:

*եթե մրցույթի նախադիտումով ավտոմատ գեներացվող ֆայլի պարունակության դինամիկ լրացված տվյալները արտացոլվում են սիմվոլներով, ապա անհրաժեշտ է Կնքվելիք Պայմանագիր հատվածի և հայերեն և ռուսերեն լեզուներում սեղմել պահել կոճակը:

Օգտատերը ցանկացած պահի կարող է կցել ընթացակարգի տվյալ փուլի արձանագրությունը: Դրա համար պետք է

մրցույթիմանրամասների էջի «Արձանագրություն» կոճակի միջոցով անցում անել համապատասխան էջ, կցել համապատասխան ֆայլը և սեղմել Պահել:



Արձանագրություն

| | |
|---|---|
| Ծածկագիր | 2023ապրանք 15/6-2 |
| Մրցույթ | տեստ |
| Արձանագրություն | Choose a file... |

Պահել

Հրապարակված մրցույթի մանրամասների էջից կարելի է բեռնել հրավերի ֆայլային տարբերակը՝ սեղմելով Բեռնել կոճակը:



| | |
|---|---|
| Հրավեր | Բեռնել |

Համակարգն ինքաշխատ հաշվում և այս էջում ցույց է տալիս հակադարձ աճուրդի մեկնարկի, ինչպես նաև հարցումներին արձագանքելու օրն ու ժամը:



| | |
|---|---|
| Հրապարակման ժամանակ | 2024-02-01 11:42:05 |
| Հայտերի ընդունման վերջնաժամկետ | 2024-02-19 10:00:00 |
| Արձանագրություն | Ժամանակ: 2024-02-01 10:41:25; Փաստաթուղթ: Փաստաթուղթ |
| Հակադարձ աճուրդ | 2024-02-20 10:00:00 |
| Հարցման արձագանքի վերջնաժամկետ | 2024-02-15 23:59:59 |
| Կարգավիճակ | Հրապարակված |

Հարցմանը պատասխանելու համար պետք է սեղմել տողի աջ անկյունի մանրամասների կոճակը:




«Հարցման մանրամասներ» էջում կարող եք ընտրել հարցմանն արձագանքելու երեք տարբերակներից մեկը:



«Պասիվացնել» կոճակի միջոցով կարելի է արձագանքել այն հարցումներին, որոնք չեն առնչվում տվյալ ընթացակարգին:

Այդհարցման պատասխանը հասանելի է լինելու միայն այն ուղարկած մասնակցին:



«Պատասխանել» կոճակը թույլ է տալիս արձագանքել այն հարցումներին, որոնց պատասխանը հասանելի է լինելու միայն հարցումն ուղարկած մասնակցին:

Համակարգում ներմուծված են տարածված հարցումների պատասխանների օրինակելի նմուշներ, որոնք կարող եք գտնել «Արագ պատասխաններ» տողում:



«Պարզաբանում» կոճակի միջոցով ուղարկվում են պաշտոնական պարզաբանումները, որոնք հասանելի են մրցույթին դիմած բոլոր մասնակիցներին և հրապարակվում են գնումների պաշտոնական տեղեկագրում:

Պարզաբանում ավելացնելիս պարտադիր է պարզաբանման և՛ հայերեն, և՛ ռուսերեն տարբերակները:



Օրենքով սահմանված կարգով և ժամկետներում Պատվիրատուի օգտատերը կարող է կատարել փոփոխություններ արդեն հրապարակված մրցույթում: Դրա համար պետք է սեղմել հրապարակված մրցույթի մանրամասներ էջի «Փոփոխել» կոճակը: Համակարգը կուղղորդի դեպի «Մրցույթի փոփոխություն» էջ, որն ունի նույն ֆունկցիոնալությունը, ինչ մրցույթի կառավարման էջը:

Անհրաժեշտ փոփոխությունները կատարելուց հետո պետք է կցել փոփոխման փաստաթուղթը և սեղմել «Հրապարակել փոփոխությունը» կոճակը:




*Կցագրված փոփոխման փաստաթուղթը ինքնաշխատ կերպով հրապարակվում են procurement.am կայքում

Համակարգն ինքնաշխատ եղանակով առկա մրցույթների ցանկում կստեղծի նոր մրցույթ՝ հաշվի առնելով կատարված փոփոխությունները:

Մինչև հայտերի ներկայացման վերջնաժամը հնարավոր է չեղարկել հրապարակված մրցույթը: Դրա համար անհրաժեշտ է հրապարակված մրցույթի մանրամասների էջի վերին աջ անկյունում սեղմել «Չեղարկել» կոճակը: Բացված էջում պետք է կցել անհրաժեշտ փաստաթուղթը և սեղմել «Չեղարկել» կոճակը:






# ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄ

Մինչև հայտերի ընդունման վերջնաժամկետը գնման ընթացակարգի վերաբերյալ բողոքարկումներ լինելու դեպքում համակարգողը կարող է Հաստատել բողոքարկումը՝ համակարգում էկրանի վերին աջ հատվածում տեղադրված «Հաստատել բողոքարկումը» կոճակի միջոցով:




Բողոքարկման հաստատման դեպքում հայտերի ընդունման վերջնաժամկետից հետո կկասեցվեն բոլոր գործընթացները մինչև բողոքարկման արդյունքի ներմուծումը( նշված գործողությունը չի կասեցնում հայտերի ընդունման գործընթացը):

Հաստատման դեպքում էկրանի վերևի աջ հատվածում կհայտնվի «Հաստատված է բողոքարկում» կոճակը:




Բողոքարկման արդյունքը պարզ դառնալուց հետո համակարգողը պետք է սեղմի «Հաստատված է բողոքարկում» կոճակը և բացված պատուհանում պետք է ընտրել «Շարունակել», եթե բողոքարկումը մերժվել է և «Չեղարկել», եթե այն բավարարվել է: Շարունակելու դեպքում համակարգը ավտոմատ կերպով կվերաբացի բոլոր կասեցված գործողությունները և կուղարկի բոլոր

ծանուցումները:

«Չեղարկել» հրահանգի դեպքում քարտուղարը կցում է անհրաժեշտ փաստաթուղթը և չեղարկում գնման ընթացակարգը:



# Հակադարձ Աճուրդ

Հայտերի ընդունման ժամկետը լրացած մրցույթների կարգավիճակը ինքնաշխատ եղանակով փոխվում է, և մրցույթը ստանում է «Նախաաճուրդային» կարգավիճակ:

Ծածկագիր | Պատվիրատու | Անվանում | Նախաաճուրդային | Ֆիլտր

| Հ/h | Պատվիրատու | Ծածկագիր | Անվանում | Չափաբաժինների քանակ | Կարգավիճակ | Մանրամասներ |
|---|---|---|---|---|---|---|
| 44162 | ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարան | ՀՀ ԼՄՏՀ-ԷԱՃԾՁԲ-26/45 | Թափառող կենդանիների վնասազերծման (ստերիլիզացման/ամլացման) ծառայություններ | 1 | Նախաաճուրդային | > |
| 44160 | ՀՀ ազգային անվտանգության ծառայություն | ՀՀ ԱԱԾ-ՏԱԿԿԳՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/11-ՀՊՍ2 | Համակարգչային պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ու պարագաների | 25 | Նախաաճուրդային | > |
| 44152 | ՀՀ ներքին գործերի նախարարություն | ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Ա-42 | ՀՀ ՆԳՆ կարիքների համար տրանսպորտային նյութերի ձեռքբերում ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Ա-42 | 35 | Նախաաճուրդային | > |

Առցանց աճուրդի ժամանակացույցին ծանոթանալու համար պետք է սեղմել մրցույթի մանրամասների էջի «Աճուրդ» կոճակը:

Մրցույթի մանրամասներ | Արձանագրություն | Աճուրդ | Չեղարկել | Ցանկ

| Ժամանակ | Համար | Անվանում |
|---|---|---|
| 2026-04-15 14:00:00 | 1 | Հեռուստացույց |
| 2026-04-15 14:00:00 | 2 | Դյուրակիր համակարգիչներ |
| 2026-04-15 14:00:00 | 3 | Բազմաֆունկցիոնալ տպիչ սարք |
| 2026-04-15 14:00:00 | 4 | Բարձրախոս |
| 2026-04-15 14:00:00 | 5 | Էլեկտրական ջեռոց |
| 2026-04-15 14:00:00 | 6 | Բանջարեղեն կտրատող սարք |
| 2026-04-15 14:30:00 | 7 | Խոհանոցային կոմբայններ |

Սահմանված ժամկետի լրանալուց հետո ինքաշխատ եղանակով կբացվի առցանց աճուրդի էջը, որտեղ կարող եք հետևել մրցույթի չափաբաժիններին դիմած մասնակիցների գնառաջարկներին:




Միաժամանակ կարող է ընթանալ մինչև վեց չափաբաժնի առցանց աճուրդ, որոնց անցկացման ժամկետ է սահմանված 30 րոպեն: Վեցից ավել չափաբաժինների դեպքում հաջորդ վեց չափաբաժինների համար առցանց աճուրդը մեկնարկում է այդ ժամկետի լրանալուց անմիջապես հետո:

Մասնակիցները գնառաջարկ ներկայացնելու համար ունեն 5 րոպե ժամանակ: Չափաբաժնի համար ամեն նոր գնառաջարկից հետո այդ չափաբաժնի քայլի ժամանակը թարմացվում է: 5 րոպե անգործությունից հետո, եթե ոչ մի մասնակից գնառաջարկ չի ներկայացրել, ապա այդ չափաբաժնի մասով աճուրդն ավարտվում է:



Աճուրդի անցկացման տևողությունը կազմում է 30 րոպե: Եթե բոլոր չափաբաժինների համար աճուրդը ավարտվել է անգործությանժամկետի լրանալուց հետո, միևնույն է չափաբաժինների հաջորդ խմբի աճուրդը կմեկնարկի միայն 30 րոպեի լրանալուց հետո: Եթեչափաբաժինների քանակը չի սպառվում մինչև աշխատանքային օրվա ավարտը, ապա մյուս չափաբաժինների համար աճուրդ կազմակերպվում է հաջորդ աշխատանքային օրը:

| | |
|---|---|
| **Չափաբաժինը ավարտվել է**<br>**49 Քացախափոսային Գավաթ Ոչ Ցեմենտային Տիտանե**<br>Վերջնական գին **22000000 AMD** | **Չափաբաժինը ավարտվել է**<br>**50 Քացախափոսային Գավաթի Պտուտակներ**<br>Վերջնական գին **500000 AMD** |

# ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ացանց աճուրդի ավարտից հետո տվյալ մրցույթի համար սկսվում է գնահատման գործընթացը, իսկ մրցույթը ստանում է «Դիմում- Հայտարարության գնահատում» կարգավիճակ: Այս փուլում հանձնաժողովի անդամները գնահատում են նվազագույն գնառաջարկը ներկայացրած մասնակցի հայտով ներկայացված փաթեթը և ստուգում դրանց համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ քարտուղարը կառավարում է գնահատման փուլն ու ամփոփում այն:

Առկա Մրցույթ

Ծածկագիր | Անվանում | Դիմում-Հայտարարությա | Ֆիլտր

| Հ/հ | Ծածկագիր | Անվանում | Չափաբաժինների քանակ | Կարգավիճակ | |
|---|---|---|---|---|---|
| 7 | 5/2/2017 | մինչև 5 մլն 2 լոտ | 2 | Դիմում-Հայտարարության գնահատում | › |

Ընդհանուր 1 տվյալ

Մրցույթի մանրամասներին ծանոթանալու համար պետք է սեղմել մանրամասների կոճակը:

Մրցույթի մանրամասների էջի վերին հատվածում արտացոլվում է մրցույթի և դրա չափաբաժինների մասին հիմնականտեղեկատվությունը:

| Մրցույթի մանրամասներ | Արձանագրություն · Դիմում-Հայտարարության գնահատման ամփոփում · Ցանկ |
|---|---|
| Ծածկագիր | չի համապատասխանում նախապայմանին , փորձ |
| Անվանում | տեստ |
| Պատվիրատու | Գնումների կենտրոն |
| Գնման տեսակ | Ծառայություն |
| Փոխարժեք | USD 1 · RUR 1 · EUR 1 |
| Պատասխաններ և պարզաբանումներ | Հարցում · Ժամանակ · Պատասխան · Պարզաբանում · Պասիվ |
| Հրավեր | Բեռնել |
| Հրապարակման ժամանակ | 2022-12-14 11:29:21 |
| Հայտերի ընդունման վերջնաժամկետ | 2022-12-14 17:40:00 |
| Արձանագրություն | Ժամանակ · Փաստաթուղթ |
| Հակադարձ աճուրդ | 2022-12-15 11:10:00 |
| Հարցման արձագանքի վերջնաժամկետ | 2022-12-10 23:59:59 |
| Կարգավիճակ | Դիմում-Հայտարարության գնահատում |

Մրցույթի մանրամասների էջի ստորին հատվածի «Գնառաջարկներ» աղյուսակում արտացոլվում են մրցույթի դիմած մասնակիցներիգնառաջարկները՝ ըստ իրենց դիմած չափաբաժինների: Աղյուսակում ցուցադրվում են մասնակիցների՝ ինչպես նախնական, այնպես էլ առցանց աճուրդի ընթացքում տրված վերջնական գները:

| Չափաբաժնի համար | | Ընկերություն | Նախահաշվային գին | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | | Մասնակցի կարգավիճակ | Ծնորհման կառավարում |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին | | |
| 1 | 1 | Ղալար | 50000000 AMD | 40000000 AMD | 20 % | 48000000 AMD | 39600000 AMD | 20 % | 47520000.00 AMD | | |
| 1 | 2 | «Վարազ» | 50000000 AMD | 48000000 AMD | 0 % | 48000000 AMD | 48000000 AMD | 0 % | 48000000.00 AMD | | |
| 2 | 1 | «Վարազ» | 50000000 AMD | 48000000 AMD | 0 % | 48000000 AMD | 39600000 AMD | 0 % | 39600000.00 AMD | | |
| 2 | 2 | Ղալար | 50000000 AMD | 40000000 AMD | 20 % | 48000000 AMD | 40000000 AMD | 20 % | 48000000.00 AMD | | |

Գնահատման կառավարման համար անհրաժեշտ է սեղմել մրցույթի մանրամասների էջի «Դիմում-Հայտարարության գնահատման ամփոփում» կոճակը և բացված էջում սեղմել «Պահել» կոճակը:

Քարտուղարը չի կարող ամփոփել փուլը, քանի դեռ հանձնաժողովի բոլոր անդամները չեն գնահատել մասնակիցների հայտով ներկայացրած փաթեթները:



Եթե հանձնաժողովի անդամների մեծամասնությունը մասնակցին տալիս է անբավարար գնահատական, ապա քարտուղարը «Պահել» կոճակը սեղմելուց առաջ «Մեկնաբանություն» դաշտում պետք է նշում կատարի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունների մասին: Դրանից հետո Անբավարար գնահատված մասնակիցը կստանա ծանուցում այն մասին, որ իր Դիմում-Հայտարարության մեջ նկատվել են թերություններ, որոնք անհրաժեշտ են շտկել:

Հանձնաժողովի անդամների գնահատման հավասար ձայների դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը որոշիչ է:

Մասնակցի կողմից համակարգում շտկված փաթեթի ուղարկումից հետո հանձնաժողովի անդամները նորից գնահատում են այն (գնահատման էջում ցույց է տրվում միայն շտկման ուղարկված մասնակցի փաթեթը): Շտկման գնահատումից հետո քարտուղարը կրկին ամփոփում է փուլը:

* Այն դեպքերում, երբ հայտերի գնահատման փուլում արձանագրվում է, որ մասնակցի հայտը ենթակա չէ շտկման և պետք է մերժվի, տվյալ հայտի կարգավիճակը «մերժված» դարձնելու համար անհրաժեշտ է armeps.am/ppcm համակարգի «Հետադարձ կապ» գործիքի միջոցով լիազոր մարմնին ներկայացնել համապատասխան խնդիրը (Լիազոր մարմնի կողմից խնդիրը կդիտարկվի գնումների պաշտոնական տեղեկագրում գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի արձանագրության և ընթացակարգը (տվյալ չափաբաժինը) չկայացած հայտարարելու մասին համապատասխան հայտարարությունների առկայության դեպքում):

Մրցույթն այս փուլում ստանում է «Դիմում-Հայտարարության շտկման գնահատում» կարգավիճակը: Գնահատման կառավարման համար պետք է սեղմել մանրամասների էջի վերին աջ անկյունի «Դիմում-Հայտարարության շտկման ամփոփում» կոճակը:







Մասնակցի կողմից շտկված փաթեթի գնահատման արդյունքում

*եթե կցագրված փաստաթուղթը կամ փաստաթղթերը հանձնաժողովի անդամների կողմից գնահատվեն «անբավարար», ապա մասնակցի հայտը և այն չափաբաժինները, որոնցում մասնակիցը զբաղեցրել էր առաջին տեղ, կհամարվեն «Մերժված»:

*եթե հանձնաժողովի անդամների կողմից «անբավարար» գնահարտվեն կոնկրետ չափաբաժին(ներ)ը, ապա մասնակցի հայտը կհամարվի «Շնորհված» , իսկ այն չափաբաժին(ներ)ը, որոնք գնահատվել են «անբավարար» կհամարվեն «Մերժված»:

Ընտրված մասնակցի հետ սկսվում է պայմանագրի շնորհման փուլը այն չափաբաժինների համար, որոնք գնահատվել են «Բավարար»

| Կազմակերպություն | Չափաբաժիններ | Նախկին դիմում-հայտարարություն | Քվեարկության արդյունքներ | Հայտի շտկման մեկնաբանություն | Դիմում-հայտարարություն | Քվեարկության արդյունքներ | Մեկնաբանություն |
|---|---|---|---|---|---|---|---|
| Դալար | 1,2 | Փաստաթուղթ | Անուն / գնահատական / Մեկնաբանություն<br>Վազգեն Հակոբյան / Անբավարար / tex bnutagir@ sxal e<br>Համլետ Սարգսյան / Անբավարար / tex bnutagir@ sxal e | Տեխ. բնութագիրը սխալ է | Փաստաթուղթ | Անուն / գնահատական / Հանձնաժողով / Մեկնաբանություն<br>Հակոբյան Վազգեն / Բավարար / Անդամ<br>Սարգսյան Համլետ / Բավարար / Անդամ / | |

| Կազմակերպություն | Մակնիշը | Ապրանքային նշան | Ֆիրմայի անվանումը | Արտադրող | Տեխնիկական առաջարկ |
|---|---|---|---|---|---|
| Դալար | Չափաբաժին1<br>Մակնիշը123<br>Лот1<br>***Նախկին դիմում*** | Չափաբաժին1<br>Ապրանքային նշան123<br>Лот 1<br>***Նախկին դիմում*** | Չափաբաժին1<br>Ֆիրմայի անվանումը123<br>Лот 1<br>***Նախկին դիմում*** | Չափաբաժին1<br>Արտադրողի անվանում123<br>Лот 1<br>***Նախկին դիմում*** | Չափաբաժին1<br>Տեխնիկական առաջարկ Բենզին, նավթի վերամշակման արգասիք: Բնորոշ հոտով, թափանցիկ, դյուրավառ հեղուկ է: Մաքուր բենզինը հաճախ օգտագործում են ճարպաբծերի, յուղաներկերի, ստեարինի, պարաֆինի, մոմի հետքերի հեռացման, ինչպես նաև հրահանների լցավորման համար:<br>Лот 1<br>Бензин, продукт нефтепереработки. Это жидкость с характерным запахом, прозрачная, легковоспламеняющаяся. Чистый бензин часто используется для удаления жира, масляных красок, стеариновой кислоты, парафина, следов воска, а также для заполнения инструкций.<br>***Նախկին դիմում*** |
| | Չափաբաժին2<br>Մակնիշը123<br>Лот2<br>***Նախկին դիմում***<br>Չափաբաժին2<br>Մակնիշը<br>Лот 2 | Չափաբաժին2<br>Ապրանքային նշան123<br>Лот 2<br>***Նախկին դիմում***<br>Չափաբաժին2<br>Ապրանքային նշան<br>Лот 2 | Ֆիրմայի անվանումը<br>Չափաբաժին2<br>Ֆիրմայի անվանումը123<br>Лот 2<br>***Նախկին դիմում***<br>Չափաբաժին2<br>Ֆիրմայի անվանումը<br>Лот 2<br>Ֆիրմայի անվանումը | Չափաբաժին2<br>Արտադրողի անվանում123<br>Лот 2<br>***Նախկին դիմում***<br>Չափաբաժին2<br>Արտադրողի անվանում<br>Лот 2 | Бензин, продукт нефтепереработки. Это жидкость с характерным запахом, прозрачная, легковоспламеняющаяся. Чистый бензин часто используется для удаления жира, масляных красок, стеариновой кислоты, парафина, следов воска, а также для заполнения инструкций.<br>Չափաբաժին2<br>Տեխնիկական առաջարկ Բենզին, նավթի վերամշակման արգասիք: Բնորոշ հոտով, թափանցիկ, դյուրավառ հեղուկ է: Մաքուր բենզինը հաճախ օգտագործում են ճարպաբծերի, յուղաներկերի, ստեարինի, պարաֆինի, մոմի հետքերի հեռացման, ինչպես նաև հրահանների լցավորման համար:<br>Лот 2<br>Бензин, продукт нефтепереработки. Это жидкость с характерным запахом, прозрачная, легковоспламеняющаяся. Чистый бензин часто используется для удаления жира, масляных красок, стеариновой кислоты, парафина, следов воска, а также для заполнения инструкций.<br>***Նախկին դիմում***<br>Չափաբաժին2<br>Лот 2<br>Бензин, продукт нефтепереработки. Это жидкость с характерным запахом, прозрачная, легковоспламеняющаяся. Чистый бензин часто используется для удаления жира, масляных красок, стеариновой кислоты, парафина, следов воска, а также для заполнения инструкций. |

Էլեկտրոնային ստորագրված ֆայլի ստուգում

Պահել

# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՇՆՈՐՀՈՒՄ

Քարտուղարն ունի հնարավորություն խմբավորելու մասնակցի՝ դրական գնահատված չափաբաժինները՝ դրանց համար առաջարկելով ինչպես միասնական, այնպես էլ՝ մեկից ավելի պայմանագրեր:

Շնորհման կառավարման համար պետք է մրցույթի մանրամասների էջի ներքևի աջ անկյունում սեղմել համապատասխան կոճակը (սլաքը):

| Չափաբաժնի համար | | Ընկերություն | Նախահաշվային գին | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | | Մասնակցի կարգավիճակ | Շնորհման կառավարում |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին | | |
| 1 | 1 | Դալար | 20000000 AMD | 16000000 AMD | 20 % | 19200000 AMD | 16000000 AMD | 20 % | 19200000.00 AMD | | > |
| 2 | 1 | Դալար | 20000000 AMD | 16000000 AMD | 20 % | 19200000 AMD | 16000000 AMD | 20 % | 19200000.00 AMD | | > |
| 3 | 1 | Դալար | 20000000 AMD | 16000000 AMD | 20 % | 19200000 AMD | 16000000 AMD | 20 % | 19200000.00 AMD | Մերժված | |
| 3 | 1 | «Վարազ» | 20000000 AMD | 16000000 AMD | 20 % | 19200000 AMD | 16000000 AMD | 20 % | 19200000.00 AMD | Մերժված | |
| 4 | 1 | Դալար | 20000000 AMD | 16000000 AMD | 20 % | 19200000 AMD | 16000000 AMD | 20 % | 19200000.00 AMD | Մերժված | |

*Եթե կա անհրաժեշտություն ընտրված մասնակցի հետ կնքել մեկից ավել պայմանագիր՝ խմբավորելով չափաբաժինները, ապա քարտուղարը «Կառավարել շնորհումը» էջում յուրաքանչյուր չափաբաժնի տողի «Խումբ» սյունակում նշում է թե ինչպես պետք է դրանք խմբավորվեն

*եթե որևէ չափաբաժի մասով առկա է կանխավճարի տրամադրում, ապա «Կանխավճար(%)» դաշտում պետք է լրացվի կանխավճարի տոկոսի չափը (ինչը խմբագրելի է մինչև վերջնական պայմանագրի մուտքագրումը համակարգ)

*Եթե գոյություն ունի այնպիսի չափաբաժին, որին դիմել են մեկից ավելի մասնակիցներ, ապա ինքնաշխատ ձևով սահմանվում է անգործության ժամկետ :

Կառավարել շնորհումը | Աճուրդի մանրամասներ

| | |
|---|---|
| Ծածկագիր | ԴԱՀԿ-ԳՀԱՊՁԲ-56/01/18 |
| Մրցույթ | Էլեկտրոնային աճուրդի փորձնական ՄՀ - 21 12 2017 |
| Հրապարակման ժամանակ | 2018-01-30 14:26:16 |
| Ավարտ | |
| Կազմակերպություն | Կ.Կ.Կազմակերպություն |

| Համար | Cpv | Անվանում | Քանակ | Կանխավճար (%) | Խումբ |
|---|---|---|---|---|---|
| 3 | 33651188/2 | Նարինջ (մեծ) | 50 | 0 | 1 |
| 4 | 33651188/2 | Խնձոր | 550 | 50 | 1 |

Պահել

Նույն խմբում ներառված չափաբաժինների համար ընտրված մասնակցին կառաջարկվի կնքել մեկ միասնական պայմանագիր

Պայմանագրի շնորհման փուլին անցնելու համար օգտատերը պետք է մուտք գործի մրցույթի մանրամասների էջ, որի «Շնորհում» աղյուսակում չափաբաժիններով խմբավորված պայմանագրերն են: Յուրաքանչյուր պայմանագրի շնորհման էջ մուտք գործելու համար պետք է սեղմել դրա տողի աջ անկյունում գտնվող մանրամասների կոճակը

**Շնորհում**

| Հ/հ | Չափաբաժիններ | Խումբ | |
|---|---|---|---|
| 6 | 1 2 | 1 | > |

«Շնորհում» էջի վերին հատվածում մրցույթի մասին հիմնական տեղեկատվությունն է «Պայմանագիր» տողից կարելի է բեռնել համակարգի կողմից ինքնաշխատ գեներացված պայմանագրի նախագծերը (հայերենով, ռուսերենով)

| Շնորհում | |
|---|---|
| Ծածկագիր | ՓՈՐՁԱԾՈՒՐԴ-03/08/2020+10 |
| Մրցույթ | սննդի ձեռքբերում+10 |
| Կազմակերպություն | «Վարազ» |
| Չափաբաժնի անվանում | 2 - սոխ |
| Պայմանագիր | Բեռնել. Բեռնել. |
| Ստորագրված պայմանագիր | |
| | Հաղորդագրություն<br>Ուղարկել |
| Հաղորդագրություններ | |

Էջի ներքևի հատվածի «Հաղորդագրություն» դաշտում պայմանագրի կնքման առաջարկ ստացած մասնակցի օգտատերը կարող է ուղարկել հարցումներ և առաջարկներ պայմանագրի վերաբերյալ, որոնց, նույն դաշտի միջոցով պատասխանում է հանձնաժողովի քարտուղարը: Հաղորդագրության ուղարկման համար պետք է սեղմել «Ուղարկել» կոճակը: Բոլոր հաղորդագրություններն արտացոլվում են «Հաղորդագրություններ» տողում:



Մասնակցի օգտատիրոջ կողմից ստորագրված պայմանագրի կցումից հետո այն հասանելի է դառնում «Շնորհում» էջի համապատասխան տողում: Այն բեռնելուց հետո քարտուղարը օրենքով սահմանված ժամկետում պետք է կցի պայմանագրի՝ Պատվիրատուի կողմից ստորագրված տարբերակը (ֆայլը ներբեռնելուց հետո պետք է սեղմել ԿՑԵԼ կոճակը):



Պայմանագրի՝ Պատվիրատուի կողմից ստորագրված տարբերակի կցումից հետո այն հայտնվում է «Վերջնական պայմանագիր» տողում:

Պայմանագրի երկկողմանի ստորագրումից հետո օգտատերերն այլևս չունեն հաղորդագրություններ ուղարկելու հնարավորություն:



| | |
|---|---|
| Ստորագրված պայմանագիր | Բեռնել |
| Վերջնական պայմանագիր | Բեռնել |
| Հաղորդագրություններ | 28-12-17 23:52<br>ՀՀ ֆինանսների նախարարություն<br>jbjkgkgj<br><br>28-12-17 23:55<br>ՀՀ ֆինանսների նախարարություն<br>dfsdfds |

* Այն դեպքերում, երբ պայմանագրի շնորհման փուլում մասնակիցը զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից, տվյալ հայտի կարգավիճակը «մերժված» դարձնելու համար անհրաժեշտ է armeps.am/ppcm համակարգի «Հետադարձ կապ» գործիքի միջոցով լիազոր մարմնին ներկայացնել համապատասխան խնդիրը (լիազոր մարմնի կողմից խնդիրը կդիտարկվի գնումների պաշտոնական տեղեկագրում գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի արձանագրության և ընթացակարգը (տվյալ չափաբաժինը) չկայացած հայտարարելու մասին համապատասխան հայտարարությունների առկայության դեպքում):

Մրցույթի ավարտից հետո 1 ժամվա ընթացքում համակարգը ավտոմատ կերպով կտեղադրի մրցույթի վերաբերյալ տեղեկատվությունները armeps.am/ppcm համակարգի համապատասխան բաժիններում:

# ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

# ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Թույլատրելի դիտարկիչով բացել https://eauction.armeps.am/ էջը: Մուտքագրել ճշգրիտ մուտքանունը «Օգտանուն» դաշտում:

Մուտքագրել ճշգրիտ գաղտնաբառը «Գաղտնաբառ» դաշտում:

Սեղմել «Մուտք» կոճակը:






Միջերեսի լեզուն փոխելու համար անհրաժեշտ է սեղմել համապատասխան լեզվի կոճակը:

Բացված պատուհանում երևում են այն դաշտերը, որոնք անհրաժեշտ են աշխատանքի համար՝ ըստ Ձեր արտոնությունների:

Գլխավոր էջում արտացոլվում են նաև Ձեր ծանուցումները, որոնց ծանոթանալու համար անհրաժեշտ է սեղմել համատասխանհղման վրա:

«ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում հանձնաժողովի անդամին տեսանելի են գնման ընթացակարգերի շրջանակներում իրեն հասցեագրված բոլոր ծանուցումները:




Առկա տվյալները դիտելու համար անհրաժեշտ է սեղմել «Մանրամասներ» կոճակը :

«**Առկա մրցույթ**» բաժնում Հանձնաժողովի անդամը կառավարում է PPCM համակարգում ստեղծված մրցույթները:



«Առկա մրցույթ» բաժնում հասանելի են միայն այն մրցույթները, որոնք վերաբերում են տվյալ հանձնաժողովի անդամին:

Բաժնում որոնումներ կատարելու համար անհրաժեշտ օգտվել ստորև ներկայացված նկարում առկա դաշտերից

Առկա Մրցույթ

Ստորև տեսանելի են միայն «Աճուրդ» կարգավիճակ ունեցող գնման ընթացակարգերը: Ձեր նախընկտրելի ընթացակարգերի վերաբերյալ որոնումներ կարող եք կատարել ներկայացված դաշտերի միջոցով:

Ծածկագիր | Անվանում | Դիմում-Հայտարարության | Ֆիլտր

| Հ/հ | Ծածկագիր | Անվանում | Չափաբաժինների քանակ | Կարգավիճակ | Մանրամասներ |
|---|---|---|---|---|---|
| 19921 | տեստային-վերապատրաստում-ապ-3/2022 | տեստ | 3 | Դիմում-Հայտարարության շտկման գնահատում | > |

մրցույթի տվյալներին ծանոթանալու համար պետք է սեղմել «Մանրամասներ» կոճակը:

Հանձնաժողովի անդամները կառավարում են այն մրցույթները, որոնց համար ավարտվել է առցանց հակադարձ աճուրդը:

## Դիմում-Հայտարարության գնահատում

Առկա Մրցույթ

Ծածկագիր | Անվանում | Դիմում-Հայտարարության | Ֆիլտր

| Հ/հ | Ծածկագիր | Անվանում | Չափաբաժինների քանակ | Կարգավիճակ | |
|---|---|---|---|---|---|
| 7 | 5/2/2017 | մինչև 5 մլն 2 լոտ | 2 | Դիմում-Հայտարարության գնահատում | > |

Ընդհանուր 1 տվյալ

Այս փուլում հանձնաժողովի անդամները գնահատում են նվազագույն գնառաջարկը ներկայացրած մասնակցի հայտով ներկայացրած փաթեթը և ստուգում դրանց համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Մրցույթի մանրամասներին ծանոթանալու համար պետք է սեղմել «Մանրամասներ» կոճակը:

Մրցույթի մանրամասների էջի վերին հատվածում արտացոլվում են մրցույթի մասին հիմնական տեղեկատվությունը:


Մրցույթի մանրամասներ

Դիմում-Հայտարարության գնահատում | Ցանկ

| | |
|---|---|
| Ծածկագիր | 5/2/2017 |
| Անվանում | մինչև 5 մլն 2 լոտ |
| Պատվիրատու | ՀՀ ֆինանսների նախարարություն |
| Գնման տեսակ | goods |
| Փոխարժեք | USD 480 RUR 9 EUR 570 |
| Պատասխաններ և պարզաբանումներ | Հարցում / Ժամանակ / Պատասխան / Պարզաբանում / Պասիվ: Հարցում, 2017-12-27 21:06:14 |
| Հրավեր | Բեռնել |
| Հրապարակման ժամանակ | 2017-12-27 18:55:22 |
| Հայտերի ընդունման վերջնաժամկետ | 2018-01-08 09:05:00 |
| Արձանագրություն | |
| Հակադարձ աճուրդ | 2018-01-10 14:00:00 |
| Հարցման արձագանքի վերջնաժամկետ | 2018-01-07 09:05:00 |
| Կարգավիճակ | Դիմում-Հայտարարության գնահատում |

| Համար | cpv | Անվանում | քանակ | Տեխնիկական առաջարկ |
|---|---|---|---|---|
| 1 | 32351150/1 | 1.ալեհավաքներ — արտացոլիչներ | 2500 | ալեհավաքներ |
| 2 | 32351180/1 | 2.ձայնագրությունների կրիչներ | 200 | ձայնագրությունների կրիչներ |

Մրցույթի մանրամասների էջի ստորին հատվածի «Գնառաջարկներ» աղյուսակում արտացոլվում են մրցույթի դիմած մասնակիցներիգնառաջարկները՝ ըստ իրենց դիմած չափաբաժինների: Աղյուսակում ցուցադրվում են մասնակիցների՝ ինչպես նախնական, այնպես էլ առցանց աճուրդի ընթացքում տրված վերջնական գները:

| Չափաբաժնի համար | | Ընկերություն | Նախահաշվային գին | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | | Մասնակցի կարգավիճակ | Ծնորհման կառավարում |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին | | |
| 1 | 1 | Դալար | 50000000 AMD | 40000000 AMD | 20 % | 48000000 AMD | 39600000 AMD | 20 % | 47520000.00 AMD | | |
| 1 | 2 | «Վարազ» | 50000000 AMD | 48000000 AMD | 0 % | 48000000 AMD | 48000000 AMD | 0 % | 48000000.00 AMD | | |
| 2 | 1 | «Վարազ» | 50000000 AMD | 48000000 AMD | 0 % | 48000000 AMD | 39600000 AMD | 0 % | 39600000.00 AMD | | |
| 2 | 2 | Դալար | 50000000 AMD | 40000000 AMD | 20 % | 48000000 AMD | 40000000 AMD | 20 % | 48000000.00 AMD | | |

Սեղմելով «Գնառաջարկներ» աղյուսակի «Ներկայացված հայտեր» սյունակում առկա մասնակցի անվան վրա՝ կարելի է անցում կատարել մասնակցի տվյալների մանրամասների էջ:

**Բիզնեսի մանրամասներ**

| | | | |
|---|---|---|---|
| Կազմակերպություն | 12 | $$ | Ընկերություն 1190 ՍՊԸ |
| Տնօրեն | Տնօրեն en | Տնօրեն ru | Աբգար Աբգարյան |
| Բանկ | Բանկ en | Բանկ ru | Կոնվերս Բանկ |
| Հասցե | dfg | grtg | Հայաստան |
| Email | testauction17@gmail.com | | |
| Հեռախոս | 099990990 | | |
| Հ.Վ.Հ.Հ. | 88888888 | | |
| Հաշվեհամար | 787878787878 | | |

Դիմում-Հայտարարության գնահատման համար հարկավոր է մրցույթի մանրամասների վերին աջ անկյունում սեղմել համապատասխան կոճակը և անցում կատարել գնահատման էջ:

Առաջին տեղ զբաղեցրած

| Կազմակերպություն | Չափաբաժիններ | Դիմում-հայտարարություն | Գնահատում | Մեկնաբանություն |
|---|---|---|---|---|
| Դալար | 1, 2 | Փաստաթուղթ | ◯ Բավարար<br>◉ Անբավարար | tex bnutagir@ sxal e |

| Կազմակերպություն | Ֆիրմայի անվանումը | Արտադրող | Տեխնիկական բնութագիր |
|---|---|---|---|
| Դալար | Չափաբաժին1 | Չափաբաժին1 | Չափաբաժին1 |
| | Ֆիրմայի անվանումը | Արտադրողի անվանում | Տեխնիկական առաջարկ Բենզին, նավթի վերամշակման արգասիք: Բնորոշ հոտով, թափանցիկ, դյուրավառ հեղուկ է: Մաքուր բենզինը հաճախ օգտագործում են ճարպաբծերի, յուղաներկերի, ստեարինի, պարաֆինի, մոմի հետքերի հեռացման, ինչպես նաև հրահանների լցավորման համար: |
| | Лот 1 | Лот 1 | Лот 1 |
| | Ֆիրմայի անվանումը | | Бензин, продукт нефтепереработки. Это жидкость с характерным запахом, прозрачная, легковоспламеняющаяся. Чистый бензин часто используется для удаления жира, масляных красок, стеариновой кислоты, парафина, следов воска, а также для заполнения инструкций. |
| | Չափաբաժին2 | Չափաբաժին2 | Չափաբաժին2 |
| | Ֆիրմայի անվանումը | Արտադրողի անվանում | |
| | Лот 2 | Лот 2 | Лот 2 |
| | Ֆիրմայի անվանումը | | Бензин, продукт нефтепереработки. Это жидкость с характерным запахом, прозрачная, легковоспламеняющаяся. Чистый бензин часто используется для удаления жира, масляных красок, стеариновой кислоты, парафина, следов воска, а также для заполнения инструкций. |

Էլեկտրոնային ստորագրված ֆայլի ստուգում

Պահել

Գնահատման համար անհրաժեշտ է կատարել համապատասխան նշում կոնկրետ մասնակցի տողի «Գնահատում» սյունակում*

Հանձնաժողովի անդամը մինչև քարտուղարի կողմից գնահատման ամփոփումը կարող է վերանայել իր գնահատականը՝ մրցույթի մանրամասների էջից կրկին մուտք գործելով գնահատման էջ:



*«Անբավարար» գնահատման ժամանակ «Մեկնաբանություն» դաշտը պարտադիր է լրացման համար, որում պետք է նշել նման գնահատական տալու ամբողջական տեղեկատվությունը:

Եթե հանձնաժողովի անդամների կողմից մասնակցին տալիս են անբավարար գնահատական, ապա մասնակիցը մրցույթի քարտուղարի կողմից կծանուցվի այն մասին, որ իր Դիմում-Հայտարարության մեջ նկատվել են թերություններ (նշելով նաև թերությունները), որոնք անհրաժեշտ է ուղղել: Մասնակցի կողմից ուղղված տարբերակի ուղարկումից հետո հանձնաժողովի անդամները նորից գնահատում են այն*:




*Մրցույթն այս փուլում ստանում է «Դիմում-Հայտարարության շտկման գնահատում» կարգավիճակը:

Գնահատման կառավարման համար պետք է սեղմել մանրամասների էջի վերին աջ անկյունի «Դիմում-Հայտարարության շտկման գնահատում» կոճակը:



Շտկման գնահատման ժամանակ գնահատման էջում տեսանելի է միայն շտկման ենթակա մասնակցի փաթեթները:

Հանձնաժողովի անդամները կարող են գնահատել ինչպես մասնակցի կողմից ներկայացված փասաթղթերը, այնպես էլ առանձին չափաբաժինները:

| Կազմակերպություն | Չափաբաժիններ | Դիմում-հայտարարություն | Գնահատում | Մեկնաբանություն |
|---|---|---|---|---|
| Մատակարար ՍՊԸ | 1 | Փաստաթուղթ<br>( Նախկին դիմում-հայտարարություն ) | ◉ Բավարար<br>○ Անբավարար | դիում հայտարարությունը շտկված է |
| mmurad | 3 | Փաստաթուղթ<br>( Նախկին դիմում-հայտարարություն ) | ◉ Բավարար<br>○ Անբավարար | դիում հայտարարությունը շտկված է |

| Կազմակերպություն | Տեխնիկական բնութագիր | Գնահատում | Մեկնաբանություն |
|---|---|---|---|
| Մատակարար ՍՊԸ | Չափաբաժին1<br>test<br>Лот 1<br>test<br>***Հայտով ներկայացված***<br>Չափաբաժին1<br>f<br>Лот 1<br>f | Չափաբաժին1<br>◉ Բավարար<br>○ Անբավարար | Չափաբաժին1 |
| mmurad | Չափաբաժին3<br>Лот 3 | Չափաբաժին3<br>○ Բավարար<br>◉ Անբավարար | Չափաբաժին3<br>մասնակցի կողմից ներկա. |

Շտկման գնահատումից հետո քարտուղարը կրկին ամփոփում է փուլը

Մասնակցի կողմից շտկված փաթեթի գնահատման արդյունքում

*եթե կցագրված փաստաթուղթը կամ փաստաթղթերը հանձնաժողովի անդամների կողմից գնահատվեն «անբավարար», ապա մասնակցի հայտը և այն չափաբաժինները, որոնցում մասնակիցը զբաղեցրել էր առաջին տեղ, կհամարվեն «Մերժված»:

*եթե հանձնաժողովի անդամների կողմից «անբավարար» գնահարտվեն կոնկրետ չափաբաժին(ներ)ը, ապա մասնակցի հայտը կհամարվի «Շնորհված» , իսկ այն չափաբաժին(ներ)ը, որոնք գնահատվել են «անբավարար» կհամարվեն «Մերժված»*Մերժման ենթակա են նաև շտկման փուլում փաստաթուղթ չուղարկած մասնակիցները:

ՄԱՍ ԵՐՐՈՐԴ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿՈՂՄԻՑ ԳԵՆԵՐԱՑՎՈՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Հայտարարություններ**

Էլեկտրոնային աճուրդ գնման ընթացակարգի շրջանակում

- ինքնաշխատ եղանակով գեներացված փաստաթղթերը ինչպիսիք են՝ հրավերը, չկայացած գնման ընթացակարգի մասին*, պայմանագիր կնքելու որոշման մասին** և կնքված պայամանագրի մասին*** հայտարարությունները ինքնաշխատ կերպով հրապարակվում են procurement.am կայքում:

- հրավերում փոփոխություն կատարելիս քարտուղարի կողմից ստեղծված և որպես փոփոխման հիմք կցագրված փոփոխման փաստաթուղթը ինքնաշխատ կերպով հրապարակվում է procurement.am կայքում:

- գնման ընթացակարգի շրջանակում մասնակցի կողմից ներկայացված հարցմանը քարտուղարի կողմից հարցման պատասխանը պարզաբանելու դեպքում, պարզաբանումը հանրայնացվում է և ինքնաշխատ կերպով հրապարակվում է procurement.am կայքում:

** Քարտուղարի կողմից գնահատումն ամփոփելուց, որոշման համար դաշտը լրացնելուց և պահպանելուց հետո ավտոմատ գեներացվում է պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը: Որոշման համարը պարտադիր դաշտ է, որի լրացնելուց հետո միայն պետք է պահպանել ամփոփումը:




* գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը գեներացվում է այն դեպքում, երբ քարտուղարը ամփոփում է գնահատման արդյունքները: Որից հետո պետք է մուտք գործել «Չկայացած ընթացակարգ» առաջադրանք, ընտրել չակայացած հայտարարելու հիմք՝ ըստ չափաբաժինների: Արդյունքում կգեներացվի հայտարարություն, որում ընդգրկված կլինեն տվյալ աճուրդի բոլոր չկայացած չափաբաժինների ինֆորմացիան



***Կնքված պայմանագրի մասին հայտարարության գեներացման համար նախատեսված «Կնքված պայմանագրի մասին հայտարարություն» առաջադրանքը տեսանելի է քարտուղարի էջում միայն այն դեպքում, երբ գնման ընթացակարգի կարգավիճակն ունի «Ավարտված» կարգավիճակ: Առաջադրանքում անհրաժեշտ է լրացնել նկարում արտացոլված սյունակները, ընդ որում հայերեն և ռուսերեն դաշտերի մուտքագրումը պարտադիր է: Լրացումներ կատարելուց հետո պետք է սեղմել «Պահել» կոճակը:




*Վերը նշված հայտարարությունները գեներացման պահից մինչև 2 ժամվա ընթացքում procurement.am կայքում չարտացոլվելու դեպքում անհրաժեշտ է առաջացած խնդրի մասին գրավոր տեղեկացնել էլեկտրոնային գնումների armeps.am/ppcm համակարգի օգտվողի էջի «Հետադարձ կապ» գործիքի միջոցով: